ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) արտահերթ նիստի

2017 թվական, սեպտեմբերի 20, ժամը՝ 15:00

Նախագահում էր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Բորիս Խարատյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ, Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ և Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստին մասնակցող անձինք՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի փոխարեն)
Ալբերտ Բաբայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տիգրան Խաչատրյանի մշտական փոխարինող)
Կարեն Հակոբյան	Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետ (ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Ս. Քրմոյանի փոխարեն)
Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Սրապիոն Առաքելյան	Թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Համլետ Դանիելյանի մշտական փոխարինող)
Լաուրա Հակոբյան	Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման

41398-17
05.10.2017թ.

	աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանի մշտական փոխարինող)
Միեր Մարկոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Որակի ասոցիացիա» գործատուների ճյուղային միության նախագահ (Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Գագիկ Մակարյանի մշտական փոխարինող)
Նուշիկ Մելքոնյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Նունյոս» հայ-շվեդական բարեգործական միության նախագահ (Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Պողոս Գաբրիելյանի փոխարեն)
Ժաննա Սիմոնյան	«Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի գործընկեր-փաստաբան (Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի հիմնադիր ղեկավար, Հանձնաժողովի անդամ Սեդրակ Ասատրյանի փոխարեն)

Հրավիրվածներ՝

Սիրանուշ Զաքարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Արտեմ Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ

Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տիգրան Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների Հանրապետական միության նախագահ
Սեդրակ Ասատրյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի հիմնադիր ղեկավար
Նաիրա Պապոյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության գործադիր տնօրեն
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագծում ներկայացված էր մեկ հարց: Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չներկայացվեցին և Օրակարգը հաստատվեց հետևյալ հարցով.

1. Զբաղվածության կարգավորման 2018 թվականի պետական ծրագրի նախագծի և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշման քննարկում և եզրակացության ներկայացում:

Զբաղվածության կարգավորման 2018 թվականի պետական ծրագրի նախագիծը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ Ռ. Պեպանյանը:

Նշվեց, որ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետ՝ ամենամյա ծրագիր) մշակման և իրականացման ուղենիշային համարվող օրենսդրական հիմքը ՀՀ զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությունն է (այսուհետ՝ զբաղվածության ռազմավարություն) և «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը: Վերջինիս համաձայն՝ զբաղվածության պետական քաղաքականությունը մշակում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և իրականացնում ամենամյա ծրագրի միջոցով՝ համագործակցելով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց հետ: Ամենամյա ծրագրի նպատակը բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումն է: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ ըստ առաջնահերթությունների կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելուն, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրելուն:

Զբաղվածության ոլորտի հիմնական ցուցանիշների վերլուծության հիմքում դրվել են զբաղվածության հետևյալ ցուցանիշների՝ տնտեսական ակտիվության մակարդակի, զբաղվածության մակարդակի, գործազրկության մակարդակի և ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակի ցուցանիշների փոխադարձ կապի և այդ ցուցանիշների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ համախառն ներքին արդյունքի ծավալի (ՀՆԱ) փոփոխության ազդեցությունների վերլուծությունը: Տեղեկատվության հավաքագրման համար հիմք են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված 2011-2016թթ. ցուցանիշները: Վերլուծվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Զբաղվածության պետական գործակալության կողմից ներկայացված ցուցանիշները:

Հաշվի առնելով զբաղվածության իրավիճակային վերլուծության ամփոփ արդյունքները, ինչպես նաև հիմք ընդունելով հեռանկարային զարգացման ծրագրում և զբաղվածության ռազմավարության մեջ սահմանված նպատակներն ու թիրախները՝ ՀՀ 2018-2020թթ. ՄԺԾ ծրագրով զբաղվածության պետական ծրագրերի ծախսարդյունավետության տեսանկյունից, որպես առաջնահերթ իրականացման ծրագրեր առանձնացվել են հետևյալ 4-ը՝

1) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին,

2) ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում,

3) աշխատանքի տոնավաճառի կազմակերպում,

4) գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում:

Միաժամանակ նախատեսվել են նաև երիտասարդ մայրերի զբաղվածության ապահովմանն ուղղված հետևյալ 3 նոր ծրագրերը՝

1) *Երեխա ունեցող մինչև 24 տարեկան գործազուրկ կանանց բարձրագույն մասնագիտական կրթությանը նախապատրաստման աջակցության տրամադրում*

2) *Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում*

3) *Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում:*

Ներկայացվեց վերը նշված ծրագրերի նպատակները, ծրագրերի շրջանակներում տրամադրվող աջակցության ձևերը և չափերը, ծրագրերից ակնկալվող արդյունքները, ինչպես նաև 2018թ. նշված ծրագրերի իրականացման ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները:

Հաշվի առնելով զբաղվածության և համախառն ներքին արդյունքի ցուցանիշների ընդհանուր դինամիկայի կանխատեսումները Հայաստանի Հանրապետությունում՝ սահմանվել են ամենամյա ծրագրի արդյունքային ցուցանիշների թիրախային արժեքները, մասնավորապես՝

1) ծրագրերում ներառված հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման աճ առնվազն 25%-ով՝ նախորդ տարվա համեմատ.

2) գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված երիտասարդների առնվազն 15%-ի աշխատանքի տեղավորում.

3) կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշի ապահովում՝ առնվազն 57.8% կամ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացման արդյունքում առնվազն 5157 անձի կայուն զբաղվածության ապահովում.

4) գործատուներից ստացված և հավաքագրված չկրկնվող թափուր աշխատատեղերի թվի աճ առնվազն 5%-ով՝ նախորդ տարվա համեմատ.

5) գործակալության տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թվի աճ առնվազն 5%-ով՝ նախորդ տարվա համեմատ:

Նախագծի վերաբերյալ ներկաների կողմից զեկուցողին տրվեցին հետևյալ հարցերը.

1. Ժ. Թորոսյանի կողմից հնչեցվեց հետևյալ հարցը.

Ծրագրի նախագծում նշված են թվային տվյալներ: Մասնավորապես ներկայացված է, որ 2017 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ գործազուրկների թվաքանակը կազմել է 75452 մարդ, որից աշխատանքի են տեղավորվել 4700-ը, այդ թվում՝ 2000 մարդ առաջին անգամ: Ստացվում է, որ զբաղվածության կարգավորման պետական ծրագրի արդյունքը 75000-ից մոտ 5000-ին աշխատանքի տեղավորումն է: Թվով քանի գործազուրկի է նախատեսվում աշխատանքի տեղավորել յուրաքանչյուր տարի:

2. Մ. Մարկոսյանի կողմից հնչեցվեց հետևյալ հարցը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը արդյոք տիրապետում է գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի և այդ աշխատատեղերի բնութագրերի վերաբերյալ տեղեկատվության:

Վերևում բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին հետևյալ պատասխանները.

1. Ժ. Թորոսյանի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ տեղեկացվեց, որ նշված 4700-ը 2017 թվականի 1-ին կիսամյակում աշխատանքի տեղավորվածների թիվն է: 2017 թվականի համար տարվա արդյունքը հնարավոր կլինի գնահատել երկրորդ կիսամյակի ավարտից հետո: Միաժամանակ տեղեկացվեց, որ 2018 թվականին նախատեսվում է զբաղվածության պետական ծրագրի և զբաղվածության տարածքային կենտրոնների միջնորդության արդյունքում աշխատանքի տեղավորել շուրջ 11720 գործազուրկի:

2. Մ. Մարկոսյանի կողմից բարձրացված հարցի վերաբերյալ տեղեկացվեց, որ Զբաղվածության պետական գործակալության կողմից գործատուների տրամադրած հայտերի հիման վրա հաշվառում է տարվում: Վերջինիս տեղեկատվական բազայում գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի և այդ աշխատատեղերի բնութագրերի վերաբերյալ տեղեկատվությունն առկա:

Ամփոփելով քննարկումը Բ. Խարատյանը տեղեկացրեց, որ ներկայացված ծրագրի նախագիծը քննարկվել է նաև Հանրապետական համաձայնեցման կոմիտեում և այնտեղ ևս հավանության է արժանացել: Բ. Խարատյանի կողմից առաջարկվեց Զբաղվածության կարգավորման 2018 թվականի պետական ծրագրի նախագծին և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշմանը տալ դրական եզրակացություն:

Վերոնշյալ առաջարկությունն ընդունվեց նիստին ներկա և քվեարկելու իրավունք ունեցող անձանց կողմից: Նշված առաջարկությանը ձեռնպահ քվեարկեց Հանձնաժողովի անդամ Ժ. Թորոսյանը:

Նիստի օրակարգի հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

1.1. Քննարկելով Զբաղվածության կարգավորման 2018 թվականի պետական ծրագրի նախագիծը և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշումը՝ տալ դրական եզրակացություն:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՌԱԿՈՂՄ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ **Բ. ԽԱՐԱՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**